ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄՇԱԿՄԱՆ, ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ, ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ, ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ԵՎ ՕԳՏԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ «ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 9 հունիսի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ Ռազմական նշանակության արտադրանքի մշակման, արտադրության, շահագործման, վերանորոգման, արդիականացման, շահագործման ժամկետների երկարաձգման եւ օգտահանության բնագավառում «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի անդամ պետությունների համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաս-

փանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2011 թվականի մայիսի 19-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Ռազմական նշանակության արտադրանքի մշակման, արտադրության, շահագործման, վերանորոգման, արդիականացման, շահագործման ժամկետների երկարաձգման եւ օգտահանության բնագավառում «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի անդամ պետությունների համագործակցության մասին համաձայնագիրն (Համաձայնագիր) ստորագրվել է 2010 թվականի դեկտեմբերի 10-ին՝ Մոսկվայում:

2. Համաձայնագրի նպատակն է Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների (Կողմեր) սպառազինության համակարգերի հետագա կատարելագործումը եւ նրանց զինված ուժերը, այլ զորքերը կամ զորային կազմավորումները սպառազինության եւ ռազմական տեխնիկայի հեռանկարային նմուշներով համալրելը:

Համաձայնագիրը սահմանում է ռազմական նշանակության արտադրանքի մշակման, արտադրության, շահագործման, վերանորոգման, արդիականացման, շահագործման ժամկետների երկարաձգման եւ օգտահանության բնագավառում Կողմերի փոխներգործության ուղղությունները, կարգն ու պայմանները:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.

ա) Համաձայնագրի շրջանակներում համագործակցել հետեւյալ ուղղություններով.

- ռազմական նշանակության արտադրանքի մշակում, փորձարկում եւ արտադրություն.

- սպառազինության եւ ռազմական տեխնիկայի շահագործում.

- սպառազինության եւ ռազմական տեխնիկայի շահագործման եւ վերանորոգման մասնագետների ուսուցում.

- սպառազինության եւ ռազմական տեխնիկայի վերանորոգում եւ արդիականացում.

- սպառազինության եւ ռազմական տեխնիկայի շահագործման ժամկետների երկարացում.

- իրենց ծառայության ժամկետը (ռեսուրսը) սպառած սպառազինության եւ ռազմական տեխնիկայի օգտահանում (լիկվիդացում).

բ) Համաձայնագրի շրջանակներում ստացված ռազմական նշանակության արտադրանքը չփոխանցել (չվաճառել) երրորդ պետություններին, միջազգային կազմակերպություններին, ինչպես նաեւ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց՝ առանց այդ արտադրանքը մատակարարող Կողմի նախնական գրավոր համաձայնության.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան տեղեկատվություն փոխանակել Համաձայնագրի իրականացմանը վերաբերող համագործակցության կոնկրետ հարցերով.

դ) Համաձայնագրի շրջանակներում համագործակցության ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը չօգտագործել ի վնաս Կողմերից որեւէ մեկի շահերի.

ե) ընդունել, որ ռազմական նշանակության արտադրանքը կարող է պարունակել մտավոր գործունեության արդյունքներ, որոնց նկատմամբ իրավունքները պատկանում են Կողմերին եւ/կամ ռազմատնտեսական համագործակցության մասնակիցներին: Նշված ռազմական նշանակության արտադրանք ստանալու դեպքում պատասխանատվություն կրել դրա չարտոնված օգտագործման եւ/կամ Կողմերի չլիազորված՝ իրավաբանական ու ֆիզիկական անձանց համար մտավոր գործունեության արդյունքները, այդ թվում՝ մտավոր սեփականություն հանդիսացող, որոնց նկատմամբ իրավունքները պատկանում են Կողմին (Կողմերին) եւ/կամ ռազմատնտեսական համագործակցության մասնակիցներին, մատչելիության համար, եւ 2007 թվականի հոկտեմբերի 6-ի՝ «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության շրջանակներում ստացված մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագրի շրջանակներում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ դրանց իրավական պահպանությունը, պաշտպանությունն ու ոչ իրավաչափ օգտագործումը չթույլատրելու նպատակով:

4. Համաձայնագրով սահմանվում են նաեւ Համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու, Համաձայնագրի մեկնաբանությանը եւ կիրառմանը

վերաբերող վեճերը եւ տարաձայնությունները լուծելու, Համաձայնագրի ուժի մեջ մտնելու հետ կապված հարաբերությունները:

Ուզբեկստանի Հանրապետությունը Համաձայնագիրն ստորագրել է վերապահումով:

5. Համաձայնագրի եւ գործում առկա մյուս փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9-րդ հոդվածի դրույթներին, քանի որ միջազգային իրավունքի սկզբունքներին եւ նորմերին համապատասխան պետությունների միջեւ ապահովում են բարիդրացիական եւ փոխշահավետ համագործակցություն:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ Համաձայնագիրն էապես լրացնում է Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների ռազմատնտեսական եւ ռազմատեխնիկական բնագավառում գոյություն ունեցող պայմանագրաիրավական բազան, անհրաժեշտ հիմքեր է ստեղծում Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության, պաշտպանունակության, ազգային անվտանգության ապահովման եւ արդյունաբերական ներուժի զարգացման համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ Ռազմական նշանակության արտադրանքի մշակման, արտադրության, շահագործման, վերանորոգման, արդիականացման, շահագործման ժամկետների երկարաձգման եւ օգտահանության բնագավառում «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի անդամ պետությունների համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

9 հունիսի 2011 թվականի
ՍԴՈ-970